

Ըզձեզ երբեմն ընթացեալսց աշխարհակուէ Զուրց հեղեղ,
Ապա մըռպլլէ դիշերոյ տըղխողութեան թընդապորդ,
Ապա արեան ճապաղիք զոր անողորմ սուրն հհեղ,
Մինչեւ կաթեաց յեթեքաց շող լուսարիկն անաղատ:

Առ նոյն շողիւ նոր Գրեգոր՝ մեծ Հայրապետը Գէորգ,
Դու մեզ տաճար կանգնեցիր եօթնաջահան ուղիւսհեմ,
Խուռն ընթանան ալսր ահա որդիք Հայկայ բիւրաւորը,

Բողոքեցան ամբ երկու, կըրկնեցան փառք քո վըսեմ,—
Մաղթեմք, հմլ Հայր, զանուն քո դարք կըրկնեցին յաւիտեան,
Եւ պանծացի Այրարատ ի Գէորգեանս ձեմարան:

ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄ ՍԱՅԱՐԵԱՆՑ

ի դիմաց Աշտիկեանց Երկրորդի Դատարանին.

ԵՐԵՅՓՈՒՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԵՍ ԻՆՔՆ
ԳԱՆՁԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԵԿԵՂԵՅԵԱՑ.
(Շաբաթ. և Էքզ.)

Անցերորդ՝ Թիֆլիզի մէջն ամենահին եկեղեցիքն էին Բերդի և փոքր Մողնի տաճարներն: Էս վերջինս էր շինուած յերկոտրասաներորդ կամ յերեքտասաներորդ դարումն՝ մի և նոյն գաւթումն, ուր է այժմեան մեծ Մողնին: Անդ կ'յաճախէին ուխտաւորք Սուրբ Գէորգի տօնի օրն, մանաւանդ Արարատէն գաղթեալ Հայերն, յորոց և բաւականին արդիւնք կ'տանար եկեղեցին, ըստ որում և նորա արդիւնքն կ'փրարեբէին մեծ Մողնին: Խ. . . Եանցն չնայելով հին Մողնիէն ստացեալ արդեանցն, ուխտաւորների ջիւղմանդութեանն և նրա հնութեանն և հին ճարտարագետութեանն, փոխանակ պահպանելոյ զայն սրբութեամբ, չ'զիտեմք յիմե՞ դրդեալ՝ աշխատեց ընդդէմ՝ կամաց ժողովրդեան խորտակիլ զայն, վասն որոյ և քաղաքական ճարտարագետ բերեց, ըստացաւ նրանից վկայական որպէս թէ խարխուլ է և շուտով կ'սոսնարհուի, ուստի պէտք է զայն քանդել, և համոզեց առ այս և զվիճակաւոր առաջնորդն և այն առանց Ս. Էջմիածնի Սինոդի հրամանի՝ ըստ զօրութեան օրինաց: Էս նուիրական բազմադարեան շինութեան կործանմանն ոչ որ Հայ վարպետ չ'յանդգնեո ձեռնամուխ լինել,

ուստի պարտաւորեցաւ Խ. . . Եանցն տալ 1000 ուրբլի կապալով յոյն արհեստաւորների, որք կ'ործանելոյ ժամանակն մեծ քանակութեամբ վառօդ գործ ածեցին, և նոյն իսկ յոյներն կ'զարմանային նորա ամուր զանգուածի և դժուարաւ կ'ործանելոյ վերայ, և կ'վկայէին թէ երբէք էն կ'ործանուող շինութիւն չէր: Էս եկեղեցւոյ նիւթը բաշխուեցաւ յումպէտս քահանայից և այլոց, որք կ'ընցին և տարին դ'ործածեցին իւրեանց տան և այլեաց մէջն զանազան շինութեանց վերայ ի թերահաւատութիւն ջիւղմանդ ժողովրդեան: Էս եկեղեցին կ'ործանելոյ ժամանակն Խ. . . Եանցն բացակայ էր և եկեղեցական հաշիւներն լինելով աւագ քահանայի ձեռքին և ապա ի ներկայութեան քանի մի անձանց զկնի հաշուատեսութեան երևեցաւ 360 ուրբլի մնացեալ վերջնոյ մօտն, ի վերջոյ վճարուեցաւ Աւագ քահանայն վերադարձնէ երեցփոխանին այն պակասնորդ զըրամն: Նա վճարումէ բաց ի 120 ուրբլիէն, որի մասին քահանայն մուրհակ էր տուել յետոյ վճարել: Չկնի ժամանակ անցանելոյ, երեցփոխանն ցոյց է տուել, այս ինքն զրեկ է մատնուումն՝ թէ փոքրը Մողնի եկեղեցւոյ քանդելոյ ժամանակն Փահլաւաշի չկար և աւագ քահանայն նորա պաշտօնըն կատարելով*), վասնորոյ հատուցի նորան 120

(*) Չափազանցութիւն կերելի:

առաջին վարձ, ուստի և նրա մուրհակն այս պատուական կվերադարձնէ ինքեան . . . քահանային, այն ինչ Յոյներն վեր էին առած կապալաւ, ուրեմն և այնուհետեւ հարկաւոր չէր Փահլաւաշին:

Եօթներորդի Ը. Զ. . . . քահանայի որդին ամսական տասն ուսուրի էր ստանում վարձ լուսարարութեան, բայց անմարդութիւնն և անկարգութիւնն եկեղեցւոյ մէջը շարունակ թաղաւորում էր սուրբ սեղանն, օծած պատկերները, պատուհանները, լուսամուտները փոշոտ աստ անդ տփռուած էին խաչերի, աւետարաններ և սուրբ պատկերներ, և ոչ ոք հետամուտ չէր՝ որպէս զի բարեկարգութիւնը պահպանուէր անդ: Բայց յայտմանէ եկեղեցումն կային չորս քահանայք, բայց շատ անգամ ժամերգութեան ժամանակն, մանաւանդ յերեկոյեան բաց ի մի քահանայէ՝ այլք չէին լինում ներկայ, ըստ որում միւսներն կամ այդիք էին վեր առած կապալով, կամ զբաղուած էին անձնական աշխարհային գործերով, յորոց արդիւնք էին ստանում և ժամանակ չ'ունէին ժամերգութեան ժամանակն ներկայ լինել *): Պ. Խ. . . . եանցի երեցփոխանութեան միջոցումն այնպէս ևս է պատահել, որ պատարագի ժամանակն այլ քահանայ չ'լինելով, պատարագիչն է վերաբերում արած և աւետարան կարդացած:

Ութներորդի եկեղեցական բոլոր արդիւնքը՝ լուսագինը, մկրտութեան և պսակի գրամն և մոմս վաճառութեան և այլն էին Պ. Խ. . . . եանցի ժամանակը քահանայից և ժամակոչի ձեռքին և զի ըստ օրինաց՝ եկեղեցական արդիւնքն պէտք է միւսնոյն օրն գրուին ժապաւինեալ մատենումն, բայց էս երեցփոխանն ոչ թէ ժապաւինեալ մատենաներ չէր պահած, չասնէք նրա բացակայութեան ժամանակն, այլ և երբ Թիֆլիս կ'լինէր՝ Զ, 3 ամիսն մին անգամ հազիւ կգնար եկեղեցին, այսինքն երբ նա կկամենար, էն ժամանակն էլ ասութեամբ քահանայից կզրէր անժապաւինեալ մատենի մէջն, առանց վերահասու լինելոյ արդեօք

նոցա ցոյց տուած հաշիւներն ուղիղ են թէ անուղիղ

Տասներորդի Մօղնի եկեղեցին ունէր քառասուն տարիէ հետէ մեռելարարձ կառք, զոր բաղադրին սանն որի վերայ կդնակէին հանգուցեկոց մարմիններն և կհասցնէին ցգերեզմանատունն, և որի ազագու իւրաքանչիւր հանգուցեկոյ համար 25—30 ուսուրի արդիւնք կատանար եկեղեցին: Էն կառքը հինացած լինելով, չկամեցաւ երեցփոխանն վերանորոգել տալ, վասնորոյ և պարգեւել է այժմեան Զ. . . քահանային:

Մետասաներորդի եկեղեցւոյ արեման կողմումն տուններ էին գնած Զաւթսեանցէն և Աբուլեանցէն 700 ուսուրիով՝ և ինքն եկեղեցին ևս անդ ունէր 7-8 սաժէն տեղ, էս ամենն ընծայել է քաղաքին առ ի լայնացնել զփողոցն: Արդարեւ լայնութիւնն էն փողոցի դիւրութիւն է կառքերի կանգնելոյն, բայց նա ինչ իրաւունք ունէր առանց խնայում տալոյ ժողովրդեան ընծայել քաղաքին այնքան գումարի գեթին: Ահա այն ինքնիշխան նորա կառավարութեան համար, ասեց ոմն ծխական թէ, «պարսն դու երկմարնների արձակ շուքայոյ և չկուկոյ նոցա մին զմինի հետ մտածեցիր, բայց քեզ յանձնեցեալ բանական ժողովուրդն և նուիրական տեղը մոռացար»:

Երկուսասաներորդի Թիֆլիսի եկեղեցիք ըստ հրամանի Ա. Ե. Հայրապետի միջոցաւ Սինօգի Սուրբ Էջմիածնայ պարտաւոր են ունենալ մի մի իւրեանց ծխական ուսումնարան մանկանց, իսկ երեքն, այսինքն նորաշենի, Բեթլիսհէմի և Մօղնիի եկեղեցիքը բաց ի վերոյիշեկոց, պարտաւոր են տալ մի մի շինութիւն, կամ նորա վարձն: Օրինորդաց ուսումնարանի համար Մօղնի եկեղեցիի օրնորդաց սուրբ Գայիանէի ուսումնարանի տեսչութիւնն վարձել էր Պ. Ա. Ա. . . . եանի տան վերի յարկն, որ կից էր եկեղեցւոյ գաւթին, 750 ուսուրիով, յորմէ եկեղեցին Ծովանեանցի ժամանակն կհասուցանէր խորհրդեամբ ծխականաց մի միայն 300 ուսուրի իսկ Խ. . . . եանցն առանց վճարի ծխականաց 400 ուսուրի: Զկնի ժամանակաց Պ. Ա. . . . եանն համաձայնեցաւ վաճառել իւր տունն շատ չափաւոր գնով, այս ինքն 8000

(*) Անշուշտ եմք՝ որ այլ եւս դադարած կլինին այսպիսի մեղադրարտ եւ աններելի դանդաղութիւնը:

նուրբիով, որի վերի յարկումն ինչպէս յիշեցի, զետեղուած էր օրիորդաց ուսումնարանն, իսկ ներքի յարկն կրերէր մերձ 350 կամ 400 ուրբի վարձ, ուր կարող էին վարժապետք կամ վարժապետուհիք բնակիլ իւրեանց սոճկի հաշիւումն և կամ այլոց վարձով տալ. բաց ի սոցանէ ունէր և մի մեծ և ընդարձակ բակ, որ ոչ միայն կճառայէր աշակերտուհեաց զբոսանաց, այլ և կաւելնար եկեղեցւոյն բաց ի շինութենէն՝ ընդարձակ գետին, նա մանաւանդ 8000 ուրբին կրերէր եկեղեցւոյն 91200 *) ուրբի տոկոսիք կամ արդիւնք:

Բայ ի սորանէ՝ կից միւսնոյն տանն, եկեղեցւոյ դաւթումն, եկեղեցին ունէր մի երկայարկ շինութիւն, որ 8-9 տարիէ հետէ էր կառուցած, որի վերի յարկն բերում էր 300 ուրբի տարեկան արդիւնք և ներքի յարկի սենեակների միւսումն կրքնակէր ժամակուռ և միւսներումն կօթադայէին ուխտաւորք, յորոց եկեղեցին արդիւնք կքաղէր, և մի սենեակն ևս էր պահարան, ուր ժողովուած էին եկեղեցական կահ և կարասիքն: Երեցիօխանըն ինքեան յայտնի պատճառաւ կամեցաւ իւր առանձին նպատակի համար խորտակել այս շինութիւնն, որ 5000 ուրբի էր արժած եկեղեցւոյն և նորա տեղն կառուցանել նոր շինութիւն օրիորդաց ուսումնարանի համար, որին և ընդդիմացան ժողովուրդք՝ թէ աւելի օգուտ է գնել զտունն Պ. Ա. . . . Եանի, որովհետեւ այն 5000 ուրբի արժած շինութիւնն կրերէ իւր արդիւնքն և Պ. Ա. . . . Եանի տան արդիւնքն զինի վճարելոյ օրիորդաց ուսումնարանին իւր խոստացիալ դումարն, աւելորդն ևս կրերէ տասն առ հարիւր տոկոսիք: Իսկ նա, այսինքն երեցիօխանն, գաղտնի յատակադիծ շինել տուեց ճարտարագիտին և ներկայացրեց վիճակաւոր արքեպիսկոպոսին և ի զարմացումն բոլոր ժողովրդոց յանկարծ սկսեց այն շինութիւնը խորտակել տալն: Այն ինչ կրկին ընդդիմացան ժողովուրդք, նա պատասխանեց, արդէն 1000 ուսուցիչաց համար համարուած տուած

որմնադրին, որ կապալով է վեր առած, և թէ կվճարէք ինձ այն 1000 ուրբին, յայնժամ կոնչացնեմ զաշնագիրս որմնադրի հետ: Աւերջապէս ըստ իւր մտացածին խորհրդոց խորտակել տուեց և կառուց նոր շինութիւն մի երեսանի, այսինքն մին կողմանի, որ արժեցաւ 12000 ուրբի, որ ասել է 17000 ուրբի, ըստ որում հինն ևս արժէր 5000 ուրբի: Ահա կամակոր կարգադրութիւն, որ ոչ թէ եկեղեցին Պ. Ա. . . . Եանի տան և գետնի տէրն չեղաւ, այլ և այնքան թանգ արժեցաւ եկեղեցւոյն Բաց ինոցանէ, այս շինութեան սենեակները ձմեռը ցուրտ են և ամառն օստտիկ ջերմ, ըստ որում կնային դէպ ի արևմուտք և մի երեսանի լինելով վնասակար է նորա պատուհանների լոյսն աշակերտուհեաց աչքերին: Ասենք և նորա յարցական կողմերն, էն եկեղեցին յաճախ կրերեն հանգուցեալներ, երբ և մեծ բազմութիւն կգումարուին, ուստի չէ պատշաճ աշակերտուհեաց ոչ միայն անտի հայել, ականառես լինել և լսել հանգուցելոց տեարց լաղոյն և բարձր ձայնի սգալոյն, որ սովորութիւն է եղած աստ և չկարողացաւ եկեղ. պաշտօնէութիւնն արդիւնք զայն, այլ և նոցա արտի մէջն այն տխուր անցքն տպաւորուելով, այն օրն անընդունակ են լինում ուսանիլ: Նաև ոչ միայն հանդէս օրերն, այլ անընդհատ նախ քան զսկսանիլ ժամերգութեան և կամ ի միջոցս և զինի այնր ժամաւորք կեղանեն և կղքօսուեն եկեղեցւոյ դաւթումն, երբ օրիորդք ի հետաքրքրութենէ փոյթ ընդ փոյթ աչքերը կյառեն նոցա վարայ և չեն կարողանում սովորիլ իւրեանց դասն կամ համար տալ, եթէ չտեսնէք այլ և այլ վնասակարութիւններն, որք կարեն ծագիլ անտի, երբ չէ ուսումնարանն զատկաւ և առանձին տան մէջ չէ:

Երեքտասաներորդ, ոչ միայն այս շինութեան պատրուակաւ երեցիօխանն վճարել է 2. քհ. ին ամիսն 30 ուրբի սոճիկ, իւր վարձ նորա ֆահլաւաշութեան, այլ և նրա շինութեան նիւթն, դէմներէ ոմանք քահանայք տարիլ են իւրեանց տներումն զործ ածել զանազան շինութեանց համար: Բաց յայտնանէ՝ էն միջոցումն և սենեակների ներկարար Մ. . . . անվարձ քանի մի սենեակի

(*) Այն խոստ կատարուել է:

ձևանկար լծղծեր է ստանձնել եանցի
ընակարանու մն և քանի մի զոներ, լուսամուտնե-
րի տախտակներ և յատակներ է ներկել զեղով :

Ի՞նչ, ե՞նչ ևս այլ և այլ համանման անցքեր ի նը-
պատ քսակի բայց ես չկամենա-
լով յօգուածս երկարացնել, փասնորոյ լռեմ, այլ
այսքան և եթ ասեմ, որ ստեպ ստեպ ժողովրդա-
կանաց յանդիմանութիւններն արտայայտելէն յե-
տոյ՝ վիճակաւոր առաջնորդի փոխուելովն՝ նա ևս
իւր հրաժարականն տուեց մի և նոյն ժամանակը
իւր հաշիւները ներկայացնելով Առաջնորդին, ա-
ռանց յայտնելոյ ժողովրդեան :

Համոզուած եմ ես, համոզուած է և ժողովուր-
դըն տեղւոյս, որ Սինօքն Սուրբ Էջմիածնի ան-
ծանօթ զօրով էս ամենայն ապօրինաւորութեանց
և այժմ տեղեկանալով էս յօդուածէն փութով
ուշադրութիւն կ'դարձնէ անցեալ հաշիւների վե-
րայ խտիւ քննելով, թոյլ չտալ խորել ոմանց
ազգային գումարներն զրամաց, և խօջընդոտն լինի
այսուհետեւ ապագայ չարաչար գործածութեանց
ոմանց, որք յանուն նուիրական պաշտօնի երեց-
փոխանութեան, կխորեն անմերձենալի դրամների
գումարներ :

Գ . Բ . Ե .

Է ՏԷԷԷ .

Տփլսեաց թեմ. Ատենի ուշադրութեան
և խոհեմութեան կ'յանձնուին ներկայ
յօդուածոյ մէջ յիշատակեալ մի քանի
կարեւոր պարբերութեանց քննութիւնքը
և ըստ այնմ արժանի տնօրինութիւնքը :



ՍՈՒՐՀԱՆԳԱԿԻ ԲԻԻԶԱՆԳԵԱՆ .

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ ՆԻՍՏԵՐ .

Կ . Պօլսոյ Հայոց Երեսփոխանական
Ընդհ. ժողովոյ վերջին մի քանի նիստե-
րը եւ ունեցած արգիւնքները տեղական

լրագիրներէն քաղելով արժան կ'համա-
րիւք հաղորդել ի տեղեկութիւն ընթեր-
ցողաց :

Ահաւասիր :

Ազգային Ընդհանուր Ժողովն՝ երէկ (Օգոստ.
13 Աւրբ.) իւր սովորական նիստն բրաւ ընդ նա-
խագահութեամբ Գեոր. Տ. Մատթէոս Ս. Եպիս-
կոպոսի Իզմիրլեան, և ատենապետութեամբ վսե-
մափայլ Ստեփան փաշայի Ապանեան, — Ս. Պատ-
րիարք Հայրը բացակայ էր անձնական տկարու-
թեան պատճառաւ :

Ժողովն երէկ օրակարգի խնդրովն (թաղական
մատակարարութեան *) բաւական զբաղելէն յի-
տոյ երեսփոխաններէն Փափազեան Ստեփան է-
ֆէնտիլի մէկ զիրը տեսաւ, որով բացատրութիւն
կուգէր ազգային վարչութեանն՝ վերջին օրերս
հրապարակեալ վարչական յայտագրին մէջ Բ.
Դրան հետ Պատրիարքարանի ունենալիք յարա-
բերութեանց վրայ յիշատակութիւն չըլլալուն
համար, ժողովն ուզեց լսել այս կարեւոր բացա-
տրութիւնը և յանձնուեցաւ վարչութեան՝ առ
ի պատասխանատուութիւն :

Համարակալութեան գիւանի մէկ տեղեկագիրն
ալ կարգացուեցաւ, որ Քաղաքական ժողովոյ
կողմանէ ազգային ընդհանուր արոց բաշխման ու
հաւաքման գործողութեանց համար եղած ինչ
ինչ առաջարկութեանց կ'վերաբերէր : Ժողովն
որոշեց օրակարգն անցունել՝ առաջիկայ նախ
առաջին խնդիր ընկել պայմանաւ :

Յետ այսորիկ ատենըր զոցուեցաւ՝ երկու շա-
բաթէն նիստ ընկել որոշմամբ :

* * *

Ընդհանուր արոց բաշխման ու հաւաքման
խնդիրը ստիպողական է ինչպէս երէկ յայտարա-

(*) Թիւրքոյ Հայոց Ազգային Սահմանադրութեան
վերաբնութեան առթիւ Թաղական Խորհուրդի կողմած
ազգային վարչական ճիւղից դրութիւնը եւ իրաւասու-
թիւնը տուաւել գործնականի եւ արգիւնտուր վիճա-
կի ենթարկել կ'ջանան, եւ այս է որ Թաղական մատա-
կարարութեան խեղիւ կ'կոչեն :